

– 1993 թ.), **Հաբերմաս** (Jürgen Habermas, *1929 թ.), **Հեօրստեր** (Norbert Hoerster, *1937 թ.), ինչպես նաև ամերիկացի ժամանակակից բարոյախօս փիլիսոփայ՝ **Մ. Ջ. Սինգեր** (Marcus George Singer, 1926 – 2016 թ.):

➤ **Գ.Վ.Ֆ. Հեգել**

Հեգել, որ Կանտի ժամանակակից եղած է, կը քննադատէ Կանտի բարոյական սկզբունքի «ծեւական» (Formal) ըլլալը, որով, ինչպես Նշեցինք, անկախ կացութենէ եւ զանազան հանգամանքներէ, ան միշտ կը գործէ եւ միշտ ուժի մէջ կը մնայ: Այս իմաստով, Հեգել կը մէջբերէ *սեփականութեան իրաւունքի* օրինակը, որ ըստ անհատի հետաքրքրութեան կրնայ գոյութիւն ունենալ կամ չունենալ: Այնուհետեւ, Հեգելի համաձայն, թէ՛ բարոյականութիւնը, իր բարիի իմաստով եւ թէ՛ չարը անհատի բանականութեան արդիւնքն են:

➤ **Ա. Շոպենհաուր**

Շոպենհաուր, որ ինքզինք Կանտի աշակերտը եւ հետեւորդը կը նկատէր, կը քննադատէ Կանտի բարոյագիտութեան հիմնաւորումը, զայն անբաւարար նկատելով: Ան կը քննադատէ նաեւ Կանտի «հրամայական» ձեւը, զայն նմանեցնելով աստուածաբանական բարոյագիտութեան *տասնաբանեայ պատուիրաններուն*, որոնք սակայն բարձր հեղինակութենէ մը (Աստուած) կը բխին, բան մը որ կը բացակայի Կանտի տեսութեան մէջ. (ինչպէս գիտենք, Կանտի համաձայն, «հրամայական»ը առնչուած է բանականութեան): Այնուհետեւ Շոպենհաուր կը քննադատէ նաեւ Կանտի *անպայմանական հրամայականը* (Categorical Imperative), որ ան առնչուած է միայն բանականութեան եւ Կանտ երբեք նկատի չէ առած՝ մարդկային փորձառութիւնը (Experience) եւ զգացումները (Feeling):

Շոպենհաուրի բարոյագիտութիւնը, «*Զգացումի բարոյագիտութիւն*»⁽⁶⁴⁾ (գերմ.՝ Gefühlsethik, անեւ.՝ Moral Sense Theory) մըն է, հիմք ունենալով *կարեկցութիւնը* (գերմ.՝ Mitleid, անգլ.՝ Compassion), որու միջոցով կը յաղթահարուի անձնասիրութիւնը (Egoism) եւ երեւան կ'ելլէ՝ այլասիրութիւնը (Altruism):

➤ **Մ. Շելլեր եւ Ն. Հարտման**

Շելլեր եւ Հարտման համախոհներ են Կանտի քննադատութեան ոլորտին մէջ: Անոնք կը քննադատեն Կանտի բարոյագիտութեան ձեւական (Formal) ըլլալու հանգամանքը եւ կը մերժեն անոր *անպայմանական հրամայականը* (Categorical Imperative), ի նպաստ իրենց *նիւթական արժէքի բարոյագիտութեան*⁽⁶⁵⁾ (գերմ.՝ Materiale Wertethik, անգլ.՝ Material Value-Ethics), որ երեւութաբանական հիմք ունի:

Շելլերի եւ Հարտմանի համաձայն, վարմունքի մը բարոյական «*լաւն ու*

(64) **Զգացումի բարոյագիտութեան** (Moral Sense Theory) մասին, տե՛ս էջ 208:

(65) **Նիւթական արժէքի բարոյագիտութեան** մասին, տե՛ս էջ 119: